ՃՇԳՐԻՏ ԲԱՌԵՐՈՎ ՃՇՄԱՐԻՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չեմ ասի, թե մուտքը արձակի երկիր խանդով ընդունեցի: Ամենևին: Արձանագիր հաջողությունն այնքան քիչ էր, Վերքի ողբով մեկընդմիշտ բացարձակված աբովյանական լեզվահեղեղը այնքան հաճախ էր խուսափում արձակի խաղաղ մարգագետինը խաղաղորեն սնելուց, որ թվում էր թե պատումը հայերենի տարերքը չէ, որ հայերենի տարերքը արձակը չէ, որ հայոց լեզվով ինքնանկարը մեկընդմիշտ հակացուցված է հայ գրողին:

Ասում եք՝ հապա Տիգրանուհի՞ն, Խնձորի այգի՞ն, հապա Եղջերո՞ւն, հապա Մուշե՞ղը… Մուշեղը, Աղասին, Եղջերուն, Սիլան, Խնձորի այգին վկայություն են այն բանի, թե որքան խոսքաշատ ու որքան սակավամարդ է հայ արձակի երկիրը և թե որքան սակավակյաց, որքան անպտուղ, գրեթե ամուլ են այդ երկրի տերերը: Եվ ուրեմն ամեն մի նոր մուտք մեծ ու նոր հույս էր, ամեն շրշյուն՝ մեղեդու սպասում, ամեն ծփանք՝ մեծ հովտի ծավալուն կենդանության ակնկալիք - առավել ևս՝ իր մուտքը:

Արձակի երկիր էր մտել մի տղա, որ, իր բոլոր ու բոլոր նախորդներից ավելի ճշգրիտ՝ ճշգրիտ բառերով ճշմարիտ պատմություններ էր պատմում, մոտավոր բառեր չուներ, որպես թե խոսքը որձաքարին է անցնելու՝ ժլատ ու ընտրող էր, վրիպած բառ չուներ, նրա բառն ու առարկան իրարու նույն պահին էին գտնում, հպանցիկը, ակնթարթայինը, անորսալին, անանունը հայտնվում էին նրա բառը արդեն գտած, արդեն կերպար ու պատկեր դարձած ու անուն առած… Եվ հրճվանք էին պարզում այդ պատկերներն ու կերպարները - ուրախացնում էին իրենց արդեն իսկ կենդանությամբ ու բազմությամբ, ուրախացնում էր նրանց տերը՝ բազում կոչվածների մեջ եզակիի իր ընտրյալությամբ: Սա ճիշտ գրող էր և սա ճշմարիտ արձակ էր: Մերձակա ամբողջ ամայության պատճառը մոտավորությունն էր, իսկ սա երկարակեցության էր կոչված: Բայց որովհետև Ակսելն ու Մուշեղը գրիչները վար էին դրել անժամանակ, իսկ Մնձուրու երկար կյանքից գրականության էր տրվել մի կարճ ժամանակ միայն և մի կարճ պահի մեջ սպառումը ճակատագիր էր թվում - այս մեկի՞ն ինչ էր պատահելու:

Այն էր պատահելու, որ ծավալված ու շարունակվող իրականությունը այս Վանոյին չէր բավարարում, շատ ավելի ճիշտ՝ չէր բավարարում գրողի, գրական գործի առջև իրականության անհաղորդությունը, այդպիսով՝ գրողի, գրական գործի անդիմությունը ինքը իր համար ծավալված ու շարունակվող իրականության առջև, որպես թե գրականությունը իրականության բաղա-

դրյալը չէ, որպես թե այդ իրականությունը այդ գրականության ածանցյալը չէ, որպես թե նրանք միմյանցից չեն սերված և միմյանց չեն պատկանում: Իր դեպքում, գոնե այս դեպքում պատճառը իրենում չէր. ինքն ու զուտ իրենից սերված թափորը աստնվորի իրենց գործն ու կյանքը ապրում էին բարեխիղճ հնազանդությամբ - պատճառը մեծ ծեսի կեղծիքն էր, և ինքն ու կեղծված, եղծված, աղարտված, իր եղծվածությամբ ամբողջ սերունդներ ու ժամանակ աղարտված այդ իրականությունը իհարկե իրարու չէին պատկանելու: Իսկ ահա իր անցումը քաղաքականության, այլև իշխանության, ասել է ծիսակարգի շրջման՝ ընդունեցի խանդով, իմ փոխարեն հարթակ էր բարձրացել ինքը, իմ տեղը՝ կալանվում էր ինքը Վանոն, ոստիկանություն ասված մուրացկան կողոպտչի որջում կանգնում էր ինքը և այսօր ինքն է վիզ դրել այնտեղ, որտեղ սովորաբար վիզ են ջարդում:

Ինչ լավ է, որ քաղաքականությունը նույնպես, ինչպես գրականությունը, ինչպես մաթեմատիկան, պատժում է իրեն աղարտողներին, ինչ լավ է, որ գրականությունը քաղաքականություն է ղրկել իր եզակի չխարդախողին: